ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2026 թվականի N 2640-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2.2 մասով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի N27-Ն հրամանի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի <<Համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգը հաստատելու մասին>> N40-Նհրամանի 23-րդ կետով, և հիմք ընդունելով 2026 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել 2026 թվականի նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2.Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3.Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Նունե Քոչարյանին, ով պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 09
ք.Մեծամոր

09/11/2026 2:18:57 PM
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ ՄՀ-3.1-68)

Հանձնաժողովի կազմը

Խորեն Յուրիի Սարուխանյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ

Արայիկ Գրիգորի Հակոբյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Մարատ Հովհաննիսյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ աշխատակազմի ղեկավար

Գրապիոն Շառոյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Քարտուղարության ,անձնակազմի կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Տատյանա Վլադիմիրի Դոբոյան
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ

Գայանե Թումանյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Մեծամորի թիվ 1 մանկապարտեզի տնօրեն